

մ'առաջնորդ, Սարգիս կը հրաժարէր, որով Յակոբ իւր զայրոյթն դուրս թափեց, եւ ըսաւ մէկուն մէկալին որ Սարգիս աղմկայոյզ մէկն է, ի հաւատս «ծայթ», (հումէական) է, «պասակեր», է, Պատրիարքական աթոռոյ հետամուտ:

Սարգիս տեսնելով այս վարմունքն՝ յանձն առաւ վերջապէս Ռոտոսթոյի առաջնորդութիւնը: Յակոբ շատ ուրախացաւ ասոր, եւ ըսաւ թէ իրմէ չի պահանջեր իրեն ընտրած այս աթոռոյ տարեկան սակը, որ էր 250 մարշիլ տաճկաց: Այս պայմանաւ Սարգիս գնաց Ռոտոսթոյ եւ մեծ ուրախութեամբ ընդունուեցաւ հօտէն: Սակայն Յակոբ խոստման հակառակ տարեկան սակը պահանջեց, որուն զայրանալով Սարգիս խիստ ծանր եւ նախատական նամակ մը գրեց Յակոբայ, եւ նամակը նաւաստւոյ մը տուաւ որ Պոլիս տանի: Սակայն յետոյ զղջալով՝ ուզեց ետ առնուլ նամակը, մինչ նաւն արգէն ճամբայ ելած էր:

Յակոբ նամակն առնլով ուրախացաւ՝ սպասած առիթը գտած ըլլալուն: Իշխանները ժողովքի կանչեց, անոնց կարգաց նամակը, ողբաց ու լացաւ, եւ պահանջեց որ իշխանք դատեն ազգին եւ պետութեան պատիւն այսպէս ոտնակոխ ընողը: Սակայն իշխանաց մէկ մասը զՍարգիս արդարացուց. այս իշխաններն էին՝ Աբրահամ՝ քուլէլեան, Սիմէոն՝ Աստուրեան, Մարտիրոս Զօպանեան, Գասպար եւ Պաղտասար Մուրատեան, եւ այլ իշխանք: Յակոբ տեսնելով ասիկայ, իւր ողբերը սաստկացուց, որով ժողո-